ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
դեկտեմբերի 16-ին

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» 2007 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-125 օրենքի 7-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

«**ԳԼՈՒԽ 7**

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Հոդված 15. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 16. Անցումային դրույթ

1. 2022 թվականի համար սույն օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասում և երկրորդ մասի «գ» կետում նշված՝ կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաշվարկներում հանձնաժողովի յուրաքանչյուր տարվա համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված պահպանման ծախսերի մեծության (ՀՊԾ) փոխարեն հիմք է ընդունվում այդ մեծության 75 տոկոսը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. դեկտեմբերի 24
Ստեփանակերտ
ՀՕ-144-Ն